

26.720

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՍՅԵՔ

Ի-61

ԽՍՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐԸ ՅԵՐՐՈՐԴ ԶՆԳԱՄ-  
ՅԱԿԻ (ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ)  
ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԵՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՄ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 0

12-61

ՓՈՒՍԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱ-  
ՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պայքարի և հաղթանակի մեծ և փառապանծ ուղի յե անցել խորհրդային ժողովուրդը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության որից: Լենինի և Ստալինի հանճարով, բուլլետի-  
յան կուսակցության յերկաթյա կամբով, ժողովրդական մաս-  
սանների—մարդկային պատմության մեջ նմանը չունեցող, են-  
տուզիազմով, մեր յերկիրը իրավազուրկ, ազքատ և կիսա-  
վայրենի դրուժյունից, ինչպիսին եր ցարական Ռուսաստանը  
վերափոխվեց բանվորների և դյուղացիների առաջավոր, հզոր  
սոցիալիստական պետության:

ԽՍՀՄ-ն թեակոխեց սոցիալիստական շինարարության  
ավարտման և աստիճանաբար սոցիալիզմից դեպի կոմունիզմ  
անցնելու ժամանակաշրջանը. ամբողջ ժողովրդական տըն-  
տեսության մեջ | հաստատվեց արտադրության միջոցների  
և դործիքների սոցիալիստական սեփականությունը: Վոչնչաց-  
ված են շահագործող դասակարգերը և մարդու կողմից մարդու  
շահագործումն առաջացնող պատճառները: Բազմազգի խորհըր-  
դային միության ժողովուրդներն ապրում են մի միասնական  
համերաչխ ընտանիքում ջերմ սիրով դեպի իրենց հայրենիքը,  
դեպի մեծ Ստալինը:

Հսկայական քայլերով աճեց մեր յերկրի ինդուստրիալ հզոր-  
ությունը: Կառուցված են բազմաթիվ նոր ֆաբրիկաներ, գոր-  
ծարաններ, ելեկտրոկայաններ, չախտեր, հանրեր, վորոնք հա-  
զեցված են առաջնակարգ տեխնիկայով: Նորից վերակառուցվել  
են հին ձեռնարկությունները: Խորհրդային Միությանը արդյու-  
նաբերական արտադրանքի ծավալի տեսակետից դրավում է  
առաջին տեղը Յեվրոպայում: Միմիայն 1939 թ. արդյունաբե-  
րական արտադրանքի բաց թողումը ԽՍՀՄ-ում ավելացավ 14,7  
տոկոսով:

Յերկրի ինդուստրացման հիման վրա, հաջողությամբ լուծ-



վեց պրոլետարական հեղափոխութեան դժվարագուշ խնդիրներից մեկը — մանր, փոշիացած գյուղացիական անտեսութեանն էր — խոշոր սոցիալիստական հողագործութեան ունեւորի վրա փոխադրելու խնդիրը: Դեռ 1938 թվին կոլտնտեսութեանն էր ընդգրկված ելին բոլոր գյուղացիական անտեսութեաններէ 93,5 %-ը: Յարական Ռուսաստանում աշխատանքի հիմնական գործիքները գյուղացիական անտեսութեան մեջ հանդիսանում ելին՝ արօրը, չուխը, փայտյա գութանը և փոցիլը: Տնտեսութեաններէ 30 %-ը չունեյին ձիեր, 34 0/0-ը — գյուղատնտեսական գութ: Մեր սոցիալիստական հողագործութեանը ղինված և առաջավոր տեխնիկայով: Կոլտնտեսային և խորհրդատեսային անձայրածիր դաշտերում 1939 թվին աշխատում ելին 500900 տրակտորներ, 168900 կոմբայններ, 216300 արքանքատար մեքենաներ: Աշխարհում չկա մի այլ յերկիր վորն ունենա իր տրամադրութեան տակ այդպիսի հզոր գյուղատնտեսական տեխնիկա: Միմիայն կոմբայնները ԽՍՀՄ-ում յերկու անգամ ալելի շատ են, քան բոլոր կապիտալիստական յերկրներում միասին վերցրած: Գյուղատնտեսութեան համախառն արտադրանքը յերկրորդ հնգամյակի ընթացքում ալելացած մեկ և կես անգամ՝ 54 տոկոսով: Յորենի և հաճարի բերքատուլութեամբ մենք առաջ անցանք հացահատիկային անտեսութեան տեսակետից կապիտալիզմի աշխարհի առաջավոր յերկրներից, ինչպիսին են ԱՄՆ-ը և Կանադան:

Համառիութեանական գյուղատնտեսական ցուցահանդեսը ակունհայտի կերպով ցույց ալելց, թե վորքան հզոր և կոլեկտիվ աշխատանքի ուժը, ինչպիսի հոյակապ հաղթանակների յե հասել կոլտնտեսային գյուղացիութեանը:

Յուցահանդեսը բարձր աստիճանի բարձրացրեց սոցիալիստական մրցութեան գրոշը կոլտնտեսական դաշտերում: Նա սովորեցնում և միլիոնավոր կոլտնտեսականներին, թե ինչպիսի պիտի սրայքարել սոցիալիստական հողագործութեան և անասնապահութեան հետագա վերելքի, բոլշևիկյան բերքատուլութեան համար:

Խորհրդային միութեան ազատ ժողովուրդը մեծագուշն վուգեորութեամբ կերտում և նոր կյանք: Լայն ծավալեց կոմունիզմի կառուցողների ստեղծագործական նախաձեռնութեանը: Մասնաների սոցիալիստական մրցութեանը, ստախանովական համաժողովրդական շարժումը բացահայտում և աշխատանքի

արտադրողականութեան աճման, արտադրանքի բաց թողնումն ալելացնելու միշտ նոր ու նոր ուղեբայներ: 1939 թվին աշխատանքի արտադրողականութեանն արդունարբերութեան մեջ ալելացավ 17 0/0-ով: Առաջացան ստախանովական շարժման աշխարհի հիանալի ձեեր, ինչպիսին են բազմադադյա հային սպասարկումը և պրոֆեսիաների համատեղութեանը: Կոլտնտեսային մասնաների աշխատանքային ենտոլիկազմի փայլուն որինակին և հանդիսանում մեծ Ֆերդանի ջրանցքի շինարարութեանը, վորը չորացած ջրամանների տանյակ հարարավոր հեկար հողերը վեր և աճում արդասավոր հողերի: Ֆերդանի կոլտնտեսականների նախաձեռնութեանը ջերմ արձարանք գտավ ամբողջ յերկրում: Ուրիշ հանրապետութեաններում և մարզերում լայն ծավալված և նոր ջրանցքների, ջրամբարների, կամուրջների, խճուղային ճանապարհների և այլն շինարարութեանը:

Սոցիալիզմը բերեց ԽՍՀՄ ժողովուրդներին վոր միայն քաղաքական այլ և նյութական բարիքներ. անչեղորեն բարձրանում և քաղաքի և կոլտնտեսային գյուղի աշխատավորութեան նյութական բարեկեցութեանը: Աղքատութեանը և սովը — աշխատավոր գյուղացիութեան կյանքի այլ անբաժան ուղեկիցները — վերջնականապես անհետացել են կոլտնտեսական գյուղից: Արմատապես փոխվում և գյուղական ամբողջ պատկերը: Աճում և կոլտնտեսութեանների հարատեթեանը, կոլտնտեսականների ունեորութեանը: 1939 թ. կոլտնտեսութեանների դրամական միջնացների մնացորդը պետական բանկի և գյուղատնտեսական բանկի հաշիվներում ալելացավ 3·201 միլիոն ուրբուց մինչև 3·624 միլիոն ուրբուց:

Սոցիալիզմը բերեց ԽՍՀՄ ժողովուրդներին բարձր կուլտուրա: Ազգարնակչութեան գրագիտութեանը բարձրացավ մինչև 81,2 տոկոսի, այն դեպքում յերբ ցարական Ռուսաստանում գրագիտներ կային 1897 թվի մարդահամարի ալլայներով միայն 24 տոկոս: Խորհրդային իշխանութեան տարիներին կառուցված են հսկայական քանակութեամբ նոր դպրոցներ, տեխնիկումներ, բուհեր, թատրոններ, ակումբներ, կենտներ, պարկեր, դրադարաններ, ստադիոններ: Միլիոնից ալելի ուսուցիչներ և գիտական աշխատողներ դաստիարակում են աճող սերունդին: Գրքերը և ժուրնալները, վորոնք առաջներում, համարյա թե մուտք չէին գործում գյուղերը, այժմ տարածվում են այնտեղ միլիոնավոր տիրաժներով:

Մտալինյան հողատարութիւնը մարդու մասին իր արտահայտութիւնն է դառնում նաև ժողովրդական առողջապահութեան դործի լայն զարգացման մեջ, նոր հիվանդանոցների, ծննդարարական տների, մանկամստերների շինարարութեան մեջ, հիվանդանոցների, ծերութեան, հաշմանդամութեան, բազմազավակութեան համար տրվող թոշակները և նպաստները հատկացումների անընդհատ աճման մեջ: Մինչհեղափոխական Ռուսաստանում կային ընդամենը 19800 բժշկիկներ, իսկ այժմ նրանց քանակը հասնում է 132 հազարի: Կոլաճանքային դուրսում աշխատում են 12,5 հազար բժշկական տեղամասեր 35 հազար ֆելձերական և մանկաբարձական կետեր: Յարական Ռուսաստանում մանկամստերներում հաշվում ելին միմիայն 550 տեղ իսկ ընթացիկ տարում մշտական մանկամստերներում պիտի պահվեն 900 հազար մանուկներ և մոտավորապես 4 միլիոն մանուկներ կլինեն զաշտային աշխատանքների ժամանակ դուրսընթացում կադմակերպվող մանկամստերներում:

Այն ժամանակ, յերբ Անգլո-Պրանսիական իմպերիալիստների բռնկը ստեղծեց նոր համաշխարհային սպանդանոց, ներդրավելով նրա մեջ ամբողջ մարդկութեան կեսից պիւլին, Խորհրդային Միութիւնն անշեղորեն տանում է խաղաղութեան քաղաքականութիւն: ԽՍՀՄ արտաքին քաղաքականութիւնն ուղղված է պատերազմի հրճիգների դեմ, ամբացնելու խաղաղութիւնը ժողովուրդների միջև, ապահովելու մեր հայրենիքի հետագա անվտանգութիւնը: Այդ քաղաքականութիւնը տալիս է իր հիմնային արդյունքները: Աճում է Խորհրդային Միութեան հեղինակութիւնը միջազգային արեւայում: Կործանվում են պատերազմի պրոֆակատորների պլանները, վորոնք սովոր ելին ուրբի մեր արյունակից յեղբայրները, լեհական պահերի ճնշումից ազատված Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները մտել են ԽՍՀՄ ժողովուրդների համերաշխ ընտանիքի մեջ:

Խորհրդային ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը պահպանում է քաջարի Կարմիր Բանակը և պանծալի Ռազմա-Մովային նավատորմը:

Խորհրդային գնեքի և խորհրդային հայրենասիրութեան անպարտելի ուժը մեկ անգամ չե ինչ փորձել են արդեն իրենց վրա ԽՍՀՄ-ի թշնամիները: Դեռևս յերկար ժամանակ կհիշեն ճա-

պոնական սամուրայները Խասան լճի և Խալխին-դոլ դետի մոտ նրանց տված առարկայական դասերը: Անթառամ փառքով պահեց իր դորշը սոցիալիզմի յերկրի բանակը Ֆիննական սպիտակզվարդիականութեան դեմ մղած պայքարի ճակատներում: Այդ բանակը կարճ ժամանակում կործանեց անառիկ համարվող «Մաններհայմի դիժը», լիկվիդացիայի յենթարկեց ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար իմպերիալիստների կողմից պատրաստված ռազմական սլացդարմը, ապահովեց Լենինի քաղաքի և Խորհրդային Միութեան Հյուսիս-արեւմտյան սահմանների անվտանգութիւնը:

Մտալինյան սահմանադրութեան արեւով լուսավորված խորհրդային յերկիրը անշեղորեն ընթանում է հետագա հաղթանակների ուղիով դեպի կոմունիզմ: ՀամԿ(բ)Կ-ի 18-րդ համագումարում ընկ. Մտալինը դրեց խորհրդային ժողովրդի առաջ մեծագույն խնդիր— մոտակա 10-15 տարիների ընթացքում հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական յերկրներից նաև անտեսապես: Այդ խնդրի իրագործումը նշանակում է, վոր «մեր յերկիրը լիովին հազեցված կլինի սպառման առարկաներով, մեզ մոտ կլինի մթերքների առատութիւն, և մենք հնարավորութիւն կունենանք կոմունիզմի առաջին Փաղից անցում կատարել դեպի յերկրորդ Փաղը» (Մտալին):

Յերրորդ հնգամյակի պլանի կատարումը կհանդիսանա վորպես խոչորագույն մի քայլ այդ ուղղութեամբ: Յերրորդ հնգամյա պլանը, դա ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագավառների, աշխատավորական լայն մասսաների կուլտուրայի և բարեկեցութեան վերեջքի մեծագույն ծրագիրն է: Արդյունաբերական արտադրանքի աճը համարյա յերկու անգամ, յուրաքանչյուր տարի հացահատիկային բերքը միջև ութը միլիարդ փիթի հասցնելը, նոր շինարարութեան մեջ 192 միլիարդ ուրբլու ներդրումը, այդ թվերի մեջ արտահայտված են տնտեսական աշխատանքների հսկայական ծավալը յերրորդ հնգամյակում:

Մենք ստեղծել ենք սոցիալիստական արդյունաբերութիւն, կառուցել ենք խորհանտեսութիւններ և կուլտեսութիւններ, զարգացրել ենք կուլտուրան, ամբացրել ենք յերկրի պաշտպանունակութիւնը, մենք կառուցել ենք և հիմնականում կառուցեցինք սոցիալիզմի յ հաշիվ ներքին ռեսուրսների, ի հաշիվ սփական միջոցների:

Պատմութիւնն այդպիսի փաստ չգիտի: Կապիտալիստական

յերկրներն ինդուստրացման են յենթադրվել զաղութներ հա-  
փրչառակելու և թալանելու ճանապարհով, պատերազմներում  
պարտված ժողովուրդներին ռազմական կոնտրիբուցիաներ կոր-  
զելու, ուրիշ յերկրներին վարկեր և ստրկացուցիչ փոխառու-  
թյուններ ստանալու ճանապարհով: Այդ ուղիներն անընդունելի  
յեն Խորհրդային յերկրի համար: Լենինի-Ստալինի կուսակցու-  
թյունը գտավ սոցիալիստական շինարարությունը Ֆիննասաավու-  
րելու այլ աղբյուրներ:

Մեր սոցիալիստական պետութունը— տնտեսական կուլտու-  
րական և պաշտպանական շինարարության համար անհրաժեշտ  
միջոցներն առաջին հերթին վերցնում և սոցիալիստական տնտե-  
սության— արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսու-  
թյան, առևտրի կուսակուսակցից, վրրոնք զբաղված են ԽՍՀՄ  
պետական բյուջեյում ամբողջ յեկամտի համարյա թե 90 տո-  
կոսը: Խոշոր աղբյուր և հանդիսանում նաև ազգաբնակչության  
ազատ խնայողությունները, վրրոնք պետությունը ներգրավում  
և սոցիալիստական շինարարության Ֆիննասաավորման համար,  
զլխավորապես, պետական փոխառությունների միջոցով: Աշխա-  
տավորության նյութական բարեկեցության անշեղորեն աճը կա-  
յուն հիմք և ստեղծում ժողովրդական խնայողության, հ' ռեա-  
պես և պետական փոխառությունների զարգացման համար մեր  
յերկրում: Ստալինյան յերկու հնգամյակների տարիներին, փո-  
խառությունների միջոցով կատարված մուտքերը կազմեցին մո-  
տավորապես 25 միլիարդ ռուբլի: Յերրորդ հնգամյակի յերկու  
տարիների ընթացքում, աշխատավորները ավեցին իրենց պե-  
տությանը 11,5 միլիարդ ռուբլուց ավելի զուգար: Ազգաբնակ-  
չության 7 միլիարդից ավելի ազատ միջոցները պահվում են  
խնայողական դրամարկղներում:

Ընթացիկ տարում պետական բյուջեյով նախատեսված և  
8 միլիարդ 665 միլ. ռ. մուտք՝ բնակչության մեջ բաժնեզրու-  
թյան կարգով իրացվող պետական փոխառություններից:

Խորհրդային փոխառությունները— իսկական մասսայական,  
ժողովրդական փոխառություններ են: Այդպիսիք— ոգտվում են  
հսկայական հաջողությամբ լայն ժողովրդական մասսաների մեջ:  
Դրա փայլուն օրինակն և հանդիսանում 1939 թվի Յերրորդ  
Հնգամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառության իրացման  
արդյունքները: Այդ փոխառությունը բաց եր թողնված 6 մի-

լիարդ ռուբլու չափով, իսկ այդ փոխառության բաժնեզրու-  
թյունը հասավ 7 միլիարդ 637 միլիոն ռուբլու:

Փոխառությունների հաջողությունները միանգամայն հա-  
կանալի յեն: Չե՛ վոր փոխառության միջոցները ծախսվում են  
ժողովրդական տնտեսության զարգացման, աշխատավորության  
կյանքի կոչտուր-կենցաղային պայմանների լավացման, մեր  
սիրելի հայրենիքի պաշտպանության ամրացման համար:

Խորհրդային փոխառությունների մեջ սերտորեն զուգակց-  
վում են պետության շահերը, յուրաքանչյուր պարտատոմս պա-  
հողի անձնական շահերի հետ: Մեր փոխառությունները տալիս  
են՝ ազգաբնակչությանը նշանակալից ջափով յեկամուտներ:  
Ստալինյան յերկու հնգամյակների տարիներին աշխատավորու-  
թյան յեկամուտները փոխառություններով (տոկոսների, շա-  
հումների, մարված պարտատոմսերի արժեքների վճարումներ)  
կազմեցին 5 միլիարդ ռուբլուց ավելի: Յերրորդ հնգամյակի  
յերկու տարիների ընթացքում ազգաբնակչությանը փոխառու-  
թյունների միջոցով յեկամուտներ են վճարված մեկ միլիարդ  
ռուբլուց ավելի:

ԽՍՀՄ կառավարության կողմից բաց թողած նոր պետական  
փոխառությունը— Յերրորդ Հնգամյակի (յերրորդ տարվա բաժ-  
նի) փոխառությունը խոշոր ավանդ և հանդիսանում խորհրդ-  
ային յերկրի Ֆիննասական բազայի հետագա ամրացման հա-  
մար: Նոր փոխառությունը կոթանդակի ժողովրդական տնտեսու-  
թյան 1940 թ. պլանի հաջող կատարմանը, ԽՍՀՄ պաշտպանու-  
թյան հետագա ուժեղացմանը: 1940 թվին մեր արդյունաբերու-  
թյան ապրանքային արտադրանքը կաճի 13,6 տոկոսով, ապ-  
րանքաչրջանառությունը կավելանա 15,7 տոկոսով, աշխատանքի  
արտադրողականությունը կբարձրանա 11 տոկոսով, արտադրանքի  
ինքնարժեքը կիջնի 2,8 տոկոսով:

1940 թիվը— մեր գյուղատնտեսության նոր վերելքի թվա-  
կանն և: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատու-  
թյունը կոյտնտեսություններում պիտի բարձրանա մինչև 11,2  
ցենտներ— մեկ հեկտարից: Կազմակերպվում են նոր 405 մեքե-  
նատրակտորային կայաններ, նույն թվում 275 հատ ՈՒԽՄՀ  
և ԲՍՄՀ արևմտյան մարդերում: Գյուղատնտեսությու-  
նը կստանա 28 հազար նոր հոր տրակտորներ և 15 հազար  
կոմբայներ: Կկառուցվեն 125 նոր մեքենա-տրակտորային ար-

Հետանոցներ և կավարավեն 720 ընթացիկ վերանորոգման արհեստանոցների կառուցումը:

Ժողովրդական անտեսութեան 1940 թվի պլանի մեծութունը ցայտուն կերպով արտահայտված է ՍՍՀՄ Գերագույն Սորհըրդի 6-րդ սեսիայի կողմից հաստատված ՍՍՀՄ պետական բյուջեում:

Սորհըրդային Միութեան 1940 թվի պետական բյուջեն հասնում է հսկայական դոմարի— համարյա 184 միլիարդ ռուբլու: Այդ դոմարից, 57 միլիարդ ռուբլուց աշխարհ զնալու յե արդյունաբերութեան, տրանսպորտի, դուրդատնտեսութեան դարդացման վրա, մոտավորապես 43 միլիարդ ռուբլի կծախսվի սոցիալ-կուլտուրական ձեռնարկումներին—կրթութեան, առողջապահութեան, սոցիալիտական ապահովագրութեան վրա: 57 միլիարդ ռուբլի առանձնացված է յերկրի պաշտպանութեան ամրացման համար:

### ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(յերրորդ տարվա բաժին)

Յերրորդ Հնգամյակի պետական փոխառութեանը (յերրորդ տարվա բաժին) հանդիսանում է ՍՍՀՄ-ում նախկիններում իրացված փոխառութեաններից ամենախոշորը: Նա բաց է թողնված 8 միլիարդ ռուբլու չափով:

Փոխառութեան ժամկետն է 20 տարի՝ 1940 թվի դեկտեմբերի 1-ից մինչև 1960 թվի դեկտեմբերի 1-ը: Մինչև 1960 թվի դեկտեմբերի 1-ը այն բոլոր միջոցները, վորոնք ստացված են պետութեան կողմից պարտատոմս պահողներին, փոխառութեան թեմբ վիբերադարձվեն պարտատոմս պահողներին: Փոխառութեան պարտատոմսերով հասանելիք յեկամուտները կսկսեն բարդվել 1940 թվի դեկտեմբերի 1-ից:

Նոր փոխառութեանը, ինչպես և նախորդ փոխառութեանները, բաց է թողնված 4 տոկոս տարեկան յեկամուտով: Այդ նըշանակում է, վոր յեկամուտների դոմարը, վորը վճարվում է պետութեան կողմից պարտատոմս պահողներին փոխառութեան դոյութեան 20 տարվա ժամանակաընթացքում կազմում է միջին հաշվով տարեկան 4 տոկոս:

Փոխառութեանը բաղկացած է յերկու մասից՝ անպայման շահող և տոկոսաբեր: Այդ մասերից յուրաքանչյուրը հանդիսա-

նում է փոխառութեան ինքնուրույն մասը և տարբերվում է մեկը մյուսից յեկամուտը վճարելու ձևով:

Անպայման շահող մասով յեկամուտը վճարվում է շահումների ձևով: Յուրաքանչյուր պարտատոմս անպայման մեկ անգամ շահույթ է փոխառութեան դոյութեան 20 տարվա ժամանակաընթացքում: Տոկոսաբեր մասի պարտատոմս պահողներին, յեկամուտը վճարվում է կորոններով յուրաքանչյուր պարտատոմսի արժեքի հիման վրա տարեկան 4 տոկոսի հաշվով:

Փոխառութեան անպայման շահող մասում կան 500, 200, 100, 50, 25 և 10 ռուբլու արժողութեան պարտատոմսեր, իսկ տոկոսաբեր մասում՝ 500, 200, 100 և 25 ռուբլու արժողութեամբ պարտատոմսեր:

Հիմնականը հանդիսանում է 100 ռուբլանոց պարտատոմսը: 50 հատ 100 ռուբլանոց պարտատոմսերը կազմում են սերիա, յուրաքանչյուր պարտատոմս ունի մեկից մինչև 50 հերթական համարներ: 50, 25 և 10 ռուբլանոց պարտատոմսերը հանդիսանում են 100 ռուբլանոց պարտատոմսի մասերը (համապատասխան կերպով կես, մեկ չորրորդ կամ մեկ տասերորդ մասը): Իսկ 500 և 200 ռուբլանոց պարտատոմսերը հանդիսանում են վորպես հինգ կամ յերկու հարյուր ռուբլանոց պարտատոմսեր և ունեն մեկ սերիայի հինգ կամ յերկու համարներ:

Փոխառութեան անպայման շահող մասով սահմանված են՝ 3000, 1000, 500, 200 և 150 ռուբլու շահումներ 100 ռուբլանոց պարտատոմսով: Շահումների այդ դոմարի մեջ մտնում է նույնպես իրեն՝ շահած պարտատոմսի արժեքը, այնքան, վորքան շահած պարտատոմսը մարվում է և դուրս է հանվում հետագա խաղարկութեանից: 50, 25 և 10 ռուբլանոց պարտատոմսերով վճարվում է շահած դոմարի համապատասխան  $(1/2, 1/4)$  կամ մեկ տասերորդ) մասը, վորն ընկնում է 100 ռուբլանոց պարտատոմսի վրա: 500 կամ 200 ռուբլանոց պարտատոմսերով, վորոնք ունեն հինգ կամ յերկու համարներ միանգամից վճարվում է հինգ կամ յերկու շահում: Յեթե 500 կամ 200 ռուբլանոց պարտատոմսի համարներից վորևե մեկի վրա ընկնում է 3000, 1000 կամ 500 ռուբլու շահում, ապա հինգհարյուր ռուբլանոց պարտատոմսի մնացած շորս համարներով, կամ 200 ռուբլանոց պարտատոմսի յերկրորդ համարով վճարվում է 150-ական ռուբլու շահում: Յեթե այս կամ այն սերիայի վրա ընկնում է 200 կամ 150 ռուբլու շահում, ապա այդպիսի շահումները վը-

Ճարվում են մեկ անգամից 500 ուղբանոց պարտատոմսի հինգ համարներով կամ 200 ուղբանոց պարտատոմսի յերկու համարներով:

Փոխառության անպայման շահող մասով քսան տարվա ժամանակաընթացքում կխաղարկվեն այնքան շահումներ, վորքան պարտատոմսեր կան:

Յուրաքանչյուր մեկ միլիոն պարտատոմսերի, այսինքն փոխառության յուրաքանչյուր 100 միլիոն ուղբու վրա 20 տարվա ժամանակաընթացքում կխաղարկվեն 80 հատ 3000-ական շահումներ, 400 հատ 1000-ական շահումներ, 8000 հատ 500-ական շահումներ, 110400 հատ 200-ական շահումներ և 881120 հատ 150-ական ուղբու շահումներ:

Յուրաքանչյուր տարի, սկսած 1941 թվից, փոխառության անպայման շահող մասով տեղի կունենան չորս շահումների վիճակահանություններ: Փոխառության ամբողջ ժամանակաշրջանում տեղի կունենան 80 շահումների վիճակահանություններ: Առաջին վիճակահանությունը տեղի կունենա փոխառության բաժնեգրության վճարումները վերջանալուց հետո— 1941 թվի հունիս ամսին: Շահումների վիճակահանությունների կատարման ժամկետները սահմանվում են ԽՍՀՄ Ծինոթողկոմատի կողմից յուրաքանչյուր տարի նախորոք և լայն կերպով ի դիտություն և հայտարարվում այդ մասին պարտատոմս պահողներին:

Արդեն 1941 թվի ընթացքում փոխառության յուրաքանչյուր 100 միլիոն ուղբու վրա խաղարկվելու յե 48000 շահում, վորը նշանակում է, վոր միջին հաշվով յուրաքանչյուր 20-21 պարտատոմսերից մեկը շահում է: Այդպիսի քանակությամբ պարտատոմսեր կխաղարկվեն նաև 1942 թվի ընթացքում: Փոխառության շրջանառության առաջին հինգ տարիներում, փոխառության յուրաքանչյուր 100 միլիոն ուղբու վրա կխաղարկվի 206400 շահումներ, այսինքն միջին հաշվով կշահի յուրաքանչյուր 4-րդ, 5-րդ պարտատոմսը:

Տոկոսաբեր մասի յուրաքանչյուր պարտատոմսին կից կան 20 հատ կտրոններ: Յուրաքանչյուր տարի սկսած 1941 թվից, կտրոններից վորեւե մեկով վճարվում է յեկամուտ պարտատոմսի արժեքի 4 տոկոսի չափով— յուրաքանչյուր անցած տարվա համար: Այդպիսով, փոխառության 20 տարվա ժամանակաընթացքում տոկոսաբեր մասի 100 ուղբանոց պարտատոմսով կվճարվի 80 ուղբի, իսկ 500 ուղբանոց պարտատոմս պահողը

կստանա 400 ուղբի յեկամուտ: Յուրաքանչյուր կտրոնի վրա նշված է նրա վճարման ժամկետը, ինչպես և այն գումարը, վորը պիտի վճարվի այդ կտրոնով:

Անպայման շահող մասի պարտատոմսերի արժեքի վերադարձումը կատարվում է պետության կողմից աստիճանաբար, փոխառության 20 տարվա ժամանակաընթացքում շահումների վճարման հետ միասին այնքան, վորքան յուրաքանչյուր շահման մեջ մտնում է նաև պարտատոմսի անվանական արժեքը: Այդպիսի կարգով անպայման շահող մասի պարտատոմսերի հետգնումը կկատարվի սկսած 1941 թվից: 1941 թ. և 1942 թ. ընթացքում հետ կգնվեն ամբողջ պարտատոմսերի մոտավորապես 10 տոկոսը:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի հետգնումը (այսինքն այդ պարտատոմսերի արժեքի վճարումը) կկատարվի 5 տարվա ընթացքում, սկսած 1956 թվի դեկտեմբերի 1-ից մինչև 1960 թ. դեկտեմբերի 1-ը հավասար մասերով՝ հատուկ մարման վիճակահանությունների միջոցով:

Անպայման շահող մասի շահած պարտատոմսերը, ինչպես և տոկոսաբեր մասի կտրոններն ու մարման վիճակահանություններում դուրս յեկած պարտատոմսերը կարող են ներկայացվել վճարման համար մինչև 1961 թվի դեկտեմբերի 1-ը: Այդ ժամկետից սկսած պարտատոմսերը և կտրոնները կսրցնում են իրենց ուժը և հետագայում այլևս չեն վճարվի:

Փոխառության պարտատոմսերը և նրանցով ստացվող յեկամուտներն ազատվում են պետական և տեղական տուրքերի հարկադրումից, անկախ այն բանից, թե ինչպիսի գումարի չափով պարտատոմսեր ունի այս կամ այն քաղաքացին և ինչպիսի յեկամուտներ է ստանում այդ պարտատոմսերով:

Փոխառություններից ստացվող միջոցները նշանակալից մասը հանձնվում են անմիջականորեն միութենական հանրապետությունների պետական բյուջեյին, ինչպես և քաղաքների, շրջանների և գյուղական խորհուրդների բյուջեներին-տեղական տնտեսական և կուլտուրական շինարարության համար: Քաղաքների, շրջանների և գյուղական խորհուրդների բյուջեներին հանձնվում են բանկորների և ծառայողների բաժնեգրությամբ մուծված բոլոր միջոցների 25 տոկոսը և կուլտեսականների ու գյուղացի մենատնտեսների բաժնեգրությամբ մուծված գումարի 90 տոկոսը:

Յերբորդ Հնգամյակի փոխառության (յերբորդ տարվա բաժնի) իրացումը կատարվում է բաժնեգրության կարգով: Յուրաքանչյուր կոլտնտեսական և գյուղացի մենատնտես, ինչպես և քաղաքի աշխատավոր, կարող է բաժնեգրվել փոխառությանը ցանկացած դումարի չափով:

Փոխառության բաժնեգրությունը կատարվում է խիստ կամայորության կարգով: Վոչ վոք իրավունք չունի հարկադրել աշխատավորներին բաժնեգրվել փոխառությանը: Յուրաքանչյուր աշխատավոր ինքն է վորոշում իր բաժնեգրության դումարի չափը: Բաժնեգրության ժամանակ վորևե հարկադրական մեթորդի կիրառումը հանդիսանում է փոխառության իրացման հիմնական պայմանի կոպիտ խախտում: Բաժնեգրվելով փոխառությանը, յուրաքանչյուր աշխատավոր կամայորության կարգով իր վրա պարտականություն է վերցնում խորհրդային պետության առաջ վճարելու իր բաժնեգրության դումարն ամբողջությամբ և ժամանակին: Այն միջոցները, վորոնք աշխատավորները պարտավորվում են փոխարինարար տալ պետությանը, մտոցրվում են սոցիալիստական շինարարության Փինանսավորման պլանի մեջ: Այդ պատճառով էլ այն պարտականությունը, վորն իր վրա յե վերցնում յուրաքանչյուր բաժնեգիր, պիտի ճշտորեն կատարվի:

Յուրաքանչյուր աշխատավոր կարող է իր ցանկության համաձայն, բաժնեգրվել փոխառության անպայման շահող կամ տոկոսաբեր մասի պարտատոմսերի: Բաժնեգիրը ինքն է նույնպես ընտրում թե ինչպիսի արժողության պարտատոմսեր է ցանկանում ձեռք բերել: Կարելի յե միաժամանակ բաժնեգրվել տարբեր մասերի և արժողության պարտատոմսերի: Սահմանափակումներ սահմանված են միայն 25 և 10 ուրբխանոց պարտատոմսերի նկատմամբ: Այդ պարտատոմսերով բաժնեգրությունն ընթանում է միայն այն դեպքում, յերբ բաժնեգրության դումարից յեղնելով հնարավոր չի տալ ավելի խոշոր արժողության պարտատոմս (որինակ— 65, 90, 125, 180 և այլն ուրբլու բաժնեգրության դեպքում):

Պարտատոմսի արժեքը կարելի յե վճարել մեկ անգամից, կամ ըստ մասերի: Բաժնեգրի կողմից պարտատոմսի ամբողջ արժեքը մեկ անգամից մուծելու դեպքում, պետությունը հնա-

րավորություն է ստանում փոխառությունից ստացված միջոցներն ավելի հաջողությամբ ոգտագործելու:

Յեթե բաժնեգիրը ցանկանում է վճարել պարտատոմսերի արժեքը վոչ թե մի անգամ, այլ մաս մաս, այս նրան տրվում է 10 ամսվա մաս-մաս վճարման ժամկետ 1940 թվի հուլիսի 1-ից ինչև 1941 թվի ապրիլ ամիսը ներառյալ: Բաժնեգիրը կարող է նույնպես իր ցանկությամբ պարտատոմսերի ամբողջ արժեքը վճարել ավելի կարճ ժամկետում: Պարտատոմսերի արժեքը մաս-մաս վճարման կարգով վճարելու դեպքում, առաջին մուծումը պիտի վճարել բաժնեգրությունը կատարելուց հետո տասը որից վոչ ուշ, իսկ մնացած մուծումների վճարումը պիտի կատարել ամսական մեկ անգամից վոչ պակաս:

Կոլտնտեսականները և գյուղացի-մենատնտեսները պիտի իրենք վճարեն կանխիկ դրամով այն պարտատոմսերի արժեքը, վորոնց համար նրանք բաժնեգրվել են: Սատիվ արգելվում է գանձումները հավաքելու գործում ղիմել վորևե հարկադրական միջոցի: Չի թույլատրվում նույնպես պարտատոմսերի արժեքը վճարել կոլտնտավարչության կողմից կոլտնտեսության միջոցներից: Սատիվ արգելվում է կոլտնտավարչություններին պահել կոլտնտեսականներից փոխառության մուծումների գումարը աշխորերով, կամ այլ հաշվարկումներով նրանց տրվող գումարներից: Չի կարելի նույնպես պահել փոխառության մուծումները կոլտնտեսական-տրակտորիստներին տրվող կամ նրանց հասնելիք գումարներից:

Գյուղական տնայնա-արհեստագործական արտելներում, փոխառության բաժնեգրված արտելի անդամների հանձնարարությամբ, արտելի վարչությունը պահում է փոխառության մուծումները նրանց վճարվող աշխատավարձից: Պարտատոմսերի արժեքը վճարելու այսպիսի կարգը թույլատրվում է միմիայն այն դյուղական տնայնա-արհեստագործական արտելներում, ուր արտելի անդամների աշխատավարձի վճարումը կատարվում է ամսական մեկ անգամից վոչ պակաս: Մյուս դյուղական տնայնա-արհեստագործական արտելների անդամները, պարտատոմսերի արժեքը վճարում են նույն կարգով, ինչ վոր կոլտնտեսականները:

Փոխառության յուրաքանչյուր բաժնեգիր փոխառության պարտատոմսերն ստանում է նրանց արժեքը լրիվ կերպով մուծելուց հետո: Պարտատոմսերը տրվում են յուրաքանչյուր բաժ-



նեզրին մեկ անգամից բաժնեգրութեան ամբողջ դումարի չափով: Պարտատոմսերի մաս-մաս հանձնում չի կատարվում: Պարտատոմսերը կարելի չե ստանալ մինչև 1942 թվի հունիսի 1-ը վերջից հետո բաժնեգիրը կորցնում և այդպիսիք ստանալու իրավունքը:

Փոխառութեան իրացումը գյուղում կազմակերպում են աշխատավորների դեպուտատների գյուղական խորհուրդները՝ կոլտնտեսութունների վարչութիւնների, պետական վարկին և խնայողութիւն ոժանդակող հանձնաժողովների և այլ հասարակական կազմակերպութիւնների ակտիվ ոժանդակութեամբ:

Փոխառութեան բաժնեգրութիւն անցկացնելու և բաժանորդներին մուծումներ դանձելու անմիջական աշխատանքները համար գյուղական խորհուրդներն առանձնացնում են իրենց լիազորներին ակտիվ և հեղինակավոր կոլտնտեսականների, կոլտնտեսուհիների և գյուղական ինտելիգենցիայի թվից, վերոնք առաջադրվում են այդ աշխատանքների համար կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կոլտնտեսութեան վարչութեան և հասարակական կազմակերպութիւնների կողմից: Գյուղխորհուրդի և շրջանային խնայողական դրամարկղի ներկայացմամբ, յուրաքանչյուր լիազոր հաստատվում և աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդի գործադիր կոմիտեյի կողմից:

Յուրաքանչյուր լիազոր գյուղխորհուրդի կողմից ամբացվում և կոլտնտեսականների կամ գյուղացի-մենատնտեսների վորոշակի խմբի, վորոնց մեջ նա տանում և փոխառութեան իրացման ամբողջ աշխատանքները— սկսած բաժնեգրութիւնն ընդունելուց և առաջին մուծումն ստանալուց մինչև բոլոր մուծումների հավաքելը և պարտատոմսերի հանձնելը բոլոր բաժնեգիրներին:

Վերցնելով իր վրա այդ աշխատանքների կատարումը, լիազորը տալիս և գյուղական խորհուրդին դրավոր պարտավորութիւն այն մասին, վոր նա կրում և իր վրա նյութական պատասխանատվութիւն հավաքած գումարների և բաժնեգիրներին հանձնելու նպատակով ստացված պարտատոմսերի ամբողջականութեան համար և, վոր փոխառութեան բոլոր գումարները ներառ կողմից ժամանակին կհանձնվեն խնայողական դրամարկղին կամ շրջանային ֆինբաժնի գործակալին: Լիազորն ստանում և գյուղխորհուրդից վկայական այն մասին, վոր ինքն իրոք իրավունք ունի կատարելու բաժնեգրութեան և մուծումները հավաքելու աշխատանքները:


Յերբորդ Հնգամյակի (յերբորդ տարվա) փոխառութեան հաշիւ իրացումը— կարելի տնտեսական-քաղաքական ինդիք և: Այդ ինդիքը պիտի լինի կուսակցական և կոմյունիստական կազմակերպութիւնների, գյուղխորհուրդների, պետական վարկին և խնայողական դործին ոժանդակող հանձնաժողովների և ամբողջ գյուղական հասարակայնութեան ուշադրութեան կենտրոնում: Այդ ինդիքի հաշիւ կատարման հիմնական պայմանը հանդիսանում և մասսայական—քաղաքական աշխատանքի լավ դրվածքը: Կոլտնտեսական մասսաների ուշադրութիւնը պիտի կենտրոնացնել սոցիալիստական շինարարութեան փայլուն արդիւնքների վրա ՍՍՀՄ-ում, Ստալինյան յերբորդ հնգամյակի հոյակապ ինդիքների վրա, և այն բանի վրա թե ինչպիսի հսկայական նշանակութիւն ունի նոր փոխառութիւնը ներկա տարում ժողովրդական տնտեսութեան պլանը ֆինանսավորելու համար: Դրա հետ միասին լայն չափով պիտի բացատրել նոր փոխառութեան պայմանները, ոգուտները, վորոնք ստանում և յուրաքանչյուր պարտատոմս պահող, բաժնեգիր պարտականութիւնը իր բաժնեգրութեան գումարը կանոնավոր կերպով վճարելու մասին: Անցյալ տարիների փորձը ցոյց և տալիս, վոր այնտեղ, վորտեղ այդ հարցերը փոխառութեան աշխատանքների պարզաբանման ժամանակ չեն լուսաբանվել անհրաժեշտ չափով, այնտեղ պակաս հաջողութեամբ և իրացվել փոխառութիւնը, դանդաղել են փոխառութեան մուծումների հավաքումը:

3553  
40

Անհրաժեշտ և հատուկ ուշադրութիւն դարձնել այն կոլտնտեսութիւնների վրա, ուր փոխառութեան իրացումն անցյալ տարի ընթացել և վոչ բավարար ակտիվութեամբ:

Փոխառութեան վերաբերյալ մասսայական-բացատրական աշխատանքները տանելու գործում պիտի ներգրավել գյուղի լավագույն ազխատորներին և պրոպագանդիստներին, անվանի կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին, գյուղական ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին: Անհրաժեշտ և տալ նրանց մանրամասն հրահանգումներ, մատակարարել փոխառութեան վերաբերյալ նյութերով: Փոխառութեան վերաբերյալ մասսայական աշխատանքներ պիտի տանեն նախև կոլտնտեսական ակումբները, խրճիթ-ընթերցարանները, պատի թերթերը, տեղական ռադիո հանդուրդները և կոլտնտեսական գյուղի բոլոր կուլտուրական ուժերը:

Փոխառութեան բաժնեգրութիւնը շատ տեղերում գուրագիպում և գյուղատնտեսական դատարանի աշխատանքներին:



Այդ պատճառով և փոխառութեան վերաբերյալ մասսայական ամբողջ աշխատանքները պիտի տեղափոխել այնտեղ, ուր գտնվում են կոլտնտեսականները— դաշտը, աշխատավայրերը, կոլտնտեսական բրիգադաները: Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր փոխառութեան բաց թողման առաջին որերն ու տասնորյակները, յերբ փոխառութեան վրա հատկապես ուժեղ չափով բեկեւ-ված է ազդաբնակչութեան ամենայայն մասսաների և հասարակայնութեան ուշադրութեանը, հանդիսանում է և բաժնեգրութեան անցկացնելու համար ամենաբարենպաստ որերը: Բաժնեգրութեան ձգձգումը յերկար ժամանակով իջեցնում է փոխառութեան հաջողութեանը:

Բաժնեգրութեան անցկացնելուց առաջ, պիտի հրապարակել կոլտնտեսականների և գյուղացի-մենատնտեսների ժողովներ: Այդ ժողովներում պիտի աշխատավորութեանը ծանոթացնել փոխառութեան բաց թողնելու նպատակների և պայմանների հետ: Ժողովները պիտի տարվեն աշխատավորութեանը փոխառութեան բաժնեգրութեան ակտիվորեն մասնակից դարձնելու կոչի նշանաբանի տակ:

Փոխառութեան դժով գյուղում տարվող ամբողջ աշխատանքների մեջ վճռական դերը պատկանում է գյուղխորհուրդներին լիազորներին: Նրանք ազխտացիա յեն տանում փոխառութեան իրացման համար, ընդունում են բաժնեգրութեանը, համալրում են մուծումները, հանձնում են պարտատմանը բաժնեգրներին: Նրանց համարում են պետական միջոցները, նրանց կողմից կատարած փոխառութեան աշխատանքների համար պետութեանը պատասխանատվութեան է կրում կոլտնտեսական և գյուղացի-մենատնտեսների ամբողջ մասսաների առաջ: Ահա թե ինչու, կայուն, աշխատանքի ընդունակ լիազորների կազմի բացակայումը— յուրաքանչյուր գյուղխորհրդի կարևորագույն պարտականութեանն է: Վորպես փոխառութեան լիազորներ, կարող են ներգրավել միմիայն դորձնական աշխատանքներում ստուգված, կոլտնտեսականների մեջ հեղինակութեան վայելող մարդիկ, վորոնք ընդունակ լինեն կատարելու իրենց հանձնարարված դորձը:

Յուրաքանչյուր լիազորին մանրամասնորեն պիտի հրահան-դել այնպես, վորպեսզի նա կարողանա բացատրել կոլտնտեսա-կանին և մենատնտեսին մեր փոխառութեանների անտեսական և քաղաքական նշանակութեանը, կարողանա ճիշտ կերպով տանել

բաժնեգրութեան վերաբերյալ հաշվարկումները: Գործի իմանա-լը— լիազորի աշխատանքների հաջողութեան գրավականն է:

Փոխառութեան բաժնեգրութեան ավարտումը դեռևս չէ նշանակում, վոր փոխառութեան աշխատանքներն ավարտված են: Վերջին հաշվով փոխառութեան հաջողութեանը վորոշում է փաստորեն մուծված գումարը: Այդ պատճառով էլ մուծումների հավաքումը բաժնեգրներին պիտի մշտապես լինի գյուղխորհուրդի և պետական վարկին ու խնայողական գործին ռեզուլտատի գյուղական հանձնաժողովի հսկողութեան տակ: Գյուղխորհուրդի նախագահը պարտավոր է սխտեմատիկաբար ստուգել փոխառութեան յուրաքանչյուր լիազորի աշխատանքները և ոգնել հեռմնացողներին: Գյուղխորհուրդի նախագահն անձնապես պատասխանատու չէ փոխառութեան հաջող իրացման և բաժնեգրութեան գումարն ամբողջութեամբ ու ժամանակին դանձեղու համար:

Հնարավոր է, վոր վորեւ մի տեղ մնացած և դեռևս չը հայտնաբերված թշնամական մնացուկները կփորձեն խանդարել փոխառութեան իրացմանը. յոյր նման փորձերին պիտի տալ վճռական հակահարված:

Միահամուռ բաժնեգրութեամբ փոխառութեանը, կոլտնտեսային գյուղացիութեանն, ինչպես և ամբողջ խորհրդային ժողովուրդը, մեկ անգամ ևս կցուցադրի խորհրդային հայրենասիրութեան ուժը, իր միաձույլ համալրվածութեանը լենինի-Մտալինի կուսակցութեան շուրջը, իր անընկճելի կամքը՝ պայքարելու կամունիզմի լրիվ հաղթանակի համար մեր յերկրում:

### ԼԻԱԶՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաջողութեամբ անցկացնել փոխառութեան բաժնեգրութեանը, ամբողջութեամբ հավաքել փոխառութեան մուծումները և ժամանակին հանձնել այդպիսի պետական գանձարկները— դրանք են փոխառութեան լիազորների պարտականութեանները: Այդ պարտականութեանները պատվաբար են և պատասխանատու: Յուրաքանչյուր լիազորի պատվի դորձն է— արդարացնել նրա նկատմամբ ունեցած համար և որինակելիորեն կատարել փոխառութեան իրացումն իր տեղամասում:

Բաժնեգրութեան անցկացումը— փոխառութեան գյուղական լիազորի աշխատանքների առաջին կարևորագույն ետապն է: Գլխավորն այստեղ կայանում է նրանում, վորպեսզի ապահովել լրիւ կոլտնտեսականների և գյուղացի-մենատնտեսների մաս-

նակցութիւնը փոխառութեան բաժնեգրութեանը: Բաժնեգրու-  
թյունը պիտի տանել բարձր մակարդակի վրա: Կոլտնտեսային  
գյուղի նյութական բարեկեցութեան աճը հնարավորութիւն է  
տալիս յուրաքանչյուր կոլտնտեսականի և գյուղացի-մենատն-  
տեսի նշանակալից չափով բարձրացնել իր բաժնեգրութեան գու-  
մարը, անցյալ տարիների համեմատութեամբ: Փոխառութեանը  
բաժնեգրելուց առաջ, լիզորը գյուղխորհրդից ստանում է բաժ-  
նեգրման թերթեր, իսկ շրջանային ֆինրաժնի գործակալից կամ  
դյուրական խնայողամարկից— հաշվարկային անդորրագրեր,  
վորոնցով հաշվի յե առնվում փոխառութեամբ հալածված դու-  
մարները:

Փոխառութեան բաժնեգրութիւնը լիզորը պիտի անցկացնի  
ինչպէս կոլտնտեսականների և գյուղացի-մենատնտեսների ընդ-  
հանուր ժողովներում, նույնպէս և տները կամ աշխատանքի  
վայրը նրանց այցելելու կարգով: Անհատական զրույցի ժամա-  
նակ լիզորը պարզաբանում է, թե բաժնեգիրն ինչ գումարի  
չափով, վոր մասի (անպայման շահող կամ տոկոսաբեր) և ինչ-  
պիսի արժողութեան պարտատոմսեր է ցանկանում ձեռք բերել:

Դրանից հետո լիզորը գրում է բաժնեգրման թերթիկում  
բաժնեգրի ազդանունը, անունը և հայրանունը և նրա կողմից  
ցանկացած պարտատոմսերի գումարը, իսկ բաժնեգիրը հաստա-  
տում է այդ տեղեկութիւնների ճշտութիւնը իր ստորագրու-  
թեամբ: Բաժնեգրման թերթերը պիտի լրացվեն պարզ ու մա-  
քուր: Բաժնեգրման թերթերում չի կարելի մտցնել վոչ մի ջնջում  
և ուղղում, առանց բաժնեգրի դրամային համաձայնութեան:

Հարկավոր չի փոխառութեան բաժնեգրութիւնը ձգձգել  
յերկար ժամանակով: Յուրաքանչյուր լիզոր ունի բոլոր  
հնարավորութիւնները փոխառութիւնը բաց թողնելուց տաա-  
ցիրեն մի քանի օրվա ընթացքում ավարտել փոխառութեան  
բաժնեգրութիւնն այն բոլոր կոլտնտեսականների և գյուղացի-  
մենատնտեսների մեջ, վորոնց նա ամբացված է: Բաժնեգրու-  
թեան կամավորութեան սկզբունքը պիտի պահպանել, վորպէս  
անխախտելի որենք: Այդ սկզբունքի խախտումը— ինչպիսի ձե-  
վով էլ վոր նա արտահայտվելու լինի, կարող է միայն վարկա-  
բեկել խորհրդային փոխառութիւնները:

Սակայն բաժնեգրութեան անցկացումը լիակատար կամավո-  
րութեան հիմունքներով չի նշանակում մատնել բաժնեգրութիւնը  
ինքնահոսի: Բոլոր կոլտնտեսականների և գյուղացի-մենատն-

տեսների լրիվ ընդգրկումը բաժնեգրութեան մեջ, ինչպէս և բաժ-  
նեգրութեան բարձր մակարդակը, կարող է ապահովել միմիայն  
այն դեպքում, յեթե գյուղխորհուրդները և լիզորները լավա-  
գույն ձևով կտանեն փոխառութեան մասնալական— բացատրա-  
կան և կազմակերպական աշխատանքները: Ձի կարելի յենթադ-  
րել, վոր բոլոր կոլտնտեսականները ու մենատնտեսները, կարգա-  
լով թերթում հայտարարութիւններ նոր փոխառութեան բաց  
թողնման մասին, կամ լսելով այդ մասին զեկուցումներ ժողով-  
ներում, անմիջապէս և մեկ անգամից կյուրացնեն փոխառութեան  
նշանակութիւնն ու պայմանները: Լիզորը պիտի հանգամանո-  
րեն բացատրի յուրաքանչյուր կոլտնտեսականին և մենատնտե-  
սին, թե ինչի համար է բաց թողնված փոխառութիւնը, ինչ  
պայմաններով է կատարվում փոխառութեան բաժնեգրութիւնը  
և ինչպիսի յեկամուտ է ստանում պարտատոմս պահողը:

Փոխառութեան վերաբերյալ բացատրական աշխատանքը լի-  
զորը պիտի տանի ինչպէս անհատական, նույնպէս և խմբակա-  
յին զրույցի կարգով: Այդպիսի զրույցներ կարելի յե կազմա-  
կերպել անմիջականորեն դաշտում, բրիգադայում, ողակում,  
ոգտագործելով այդ նպատակի համար նրանց հանգստի ժամերը:  
Ոգտակար է անցկացնել կոլտնտեսականների հետ նոր փոխա-  
ռութիւնը բաց թողնելու վերաբերյալ կառավարական վորոշ-  
ման, ինչպէս և այդ առթիւ առանձին թերթերի հոդվածների  
ընթերցում: Ամբողջ ազիտացիան պիտի կառուցել այնպէս,  
վորպէսզի հաղթական սոցիալիստական շինարարութեան կոնկ-  
րետ որինակների, իր շրջանի կոլտնտեսութեան հաջողութիւն-  
ների հիման վրա ցույց տրվի մեր փոխառութիւնների հսկայա-  
կան նշանակութիւնը: Այս կամ այն կոլտնտեսականի, ուսուց-  
չի, գյուղատնտեսի, բժշկի կողմից շահումների ստացման կոնկ-  
րետ փաստերով ակնհայտ կերպով ցույց տալ պետական փոխա-  
ռութիւնների ոգտակարութիւնն աշխատավորութեան համար:  
Լիզորն իր զրույցների մեջ պիտի պատմի այն առաջավոր կոլ-  
տնտեսականների մասին, վորոնք բաժնեգրվում են փոխառու-  
թեանը խոշոր գումարներով, կամ միանվագ կանխիկ գումարով  
մուծում են իրենց բաժնեգրութեան ամբողջ գումարը:

Վերջացնելով բաժնեգրութիւնը, լիզորը հանձնում է  
գյուղխորհրդի նախագահին բաժնեգրութեան թերթերը, վորն իր  
հերթին մանրամասնորեն ստուգելուց հետո հաստատում է այդ-  
պիսի իր ստորագրութեամբ և հանձնում է շրջֆինրաժնի գոր-

ծակալին և դյուղական խնայութեամբ կղին պահելու բաժնեգրու-  
թյան հաշվառման և լիազորների հետ հաշվարկումներ կատարե-  
լու համար:

Փոխառութեան իրացման վնասիկան ետապը գյուղում—համ-  
դիսանում է գումարների գրանցումը բաժնեգիրներից:

Այդ միանգամայն հասկանալի չէ: Վերոլհետե չէ՛ վոր պե-  
տական դանձարկը փաստորեն մուծված դրամն է, վոր վեր-  
ջին հաշվով վորոշում է փոխառութեան իրացման հաջողությու-  
նը: Այստեղ ամեն ինչ կախված է լիազորի աշխատանքից: Բազ-  
մաթիվ դյուղխորհուրդների որինակով, ուր կոլտնտեսականնե-  
րը ժամանակին և ամբողջութեամբ և հաճախ ել ժամկետից չուտ  
են մշարում պետական փոխառութեանները իրենց բաժնեգրու-  
թյան գումարը, յերևում է, վոր գումարների հաջող հավաքու-  
մը հանդիսանում է ամենից առաջ փոխառութեան լիազորների  
ակտիվ աշխատանքի արդյունքը:

Փոխառութեան բաժնեգրութեան անցկացումը պիտի սերտո-  
րեն կապել մուծումները հավաքելու հետ: Կարևոր է ամենից  
առաջ ապահովել, վորպեսզի յուրաքանչյուր բաժնեգիր առաջին  
մուծումը մշարի կամ անմիջապես բաժնեգրութեան ժամանակ,  
կամ վոչ ուշ տասնորջա ժամկետից: Այդ հիմնական պայմանի  
կատարումը կողմի ամբողջել բաժնեգրութեանը:

Ինչպես ցույց տվեց անցյալ տարվա փորձը, շատ կոլտնտե-  
սականներ և դյուղացի-մենատնտեսներ, բաժնեգրվելով փոխա-  
ռութեանը, միանգամից և ամբողջութեամբ մշարում են իրենց  
բաժնեգրութեան գումարը: Այդ հիանալի նախաձեռնութեանը,  
վորը վկայում է կոլտնտեսային դյուղացիութեան գիտակցու-  
թյան աճման և նրա նյութական բարեկեցութեան անշեղորեն  
բարձրացման մասին, պիտի ամենուրեք խրախուսել և լայն կեր-  
պով ծավալել:

Յուրաքանչյուր լիազոր պիտի հիշի, վոր փոխառութեան  
գումարները հավաքելու ամենաբարենպաստ ժամանակը հանդի-  
սանում է բաժնեգրութեանն անցկացնելու ժամանակաշրջանը և  
բաժնեգրութեանն անցկացնելուց հետո մտտակա մի քանի ամիս-  
ները: Այդ ժամկետին, յերևելով կոլտնտեսականների և դյուղա-  
ցի-մենատնտեսների ցանկութեանից, պիտի հիմնականում վեր-  
ջացնել փոխառութեան մուծումների հավաքումը:

Ընդունելով բաժնեգրութեանն այն կոլտնտեսականից կամ  
դյուղացի-մենատնտեսից, վորը ցանկանում է մշարել իր բաժ-

նեգրութեան գումարը մաս-մաս վճարման կարգով, լիազորը  
պարզում է թե բաժնեգիրը յուրաքանչյուր ամսի վոր որերին  
պիտի կատարի հետագա մուծումները: Այդ ժամկետները հան-  
դիսանում են պարտադիր: Լիազորն այդ ժամկետին կանոնա-  
վոր կերպով պիտի այցելի բաժնեգրին և ստանա նրանից մու-  
ծումները: Այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վո-  
րոնք ձգձգում են հերթական մուծումների վճարումը, լիազորը  
պետք է սխտեմատիկորեն հիշեցնի նրանց— պետութեան հան-  
դեպ իրենց վրա վերցրած պարտականութեանները ժամանակին  
կատարելու մասին:

Առաջին մուծումը ստանալու հետ միաժամանակ լիազորը  
տալիս է բաժնեգրին առձեռն հաշվարկային անդորրագիրը,  
պահելով իր մոտ այդ անդորրագրի արմատը (պատճեն), ան-  
դորրագրի և նրա արմատի մեջ կատարում է այն բոլոր գրան-  
ցումները, վորոնք կան բաժնեգրման թերթերում և նշում է  
առաջին մուծումը կատարելու մասին: Անդորրագիրը մնում է  
բաժնեգրի մոտ մինչև բաժնեգրութեան ամբողջ գումարի լրիվ  
վճարումը և պարտատմանի ստացումը:

Յուրաքանչյուր հերթական մուծում վճարելիս, բաժնեգի-  
րը ներկայացնում է լիազորին իր հաշվարկային անդորրագիրը:  
Լիազորը նշում է անդորրագրում և արմատում ընդունված մուծ-  
ման գումարը և ստորագրում է անդորրագրում գումարն ստանա-  
լու մասին: Անդորրագրի արմատի վրա ստորագրում է բաժնե-  
գիրը, դրանով իսկ հաստատելով լիազորի կողմից կատարված  
գրանցումների ճշտութեանը:

Լիազորներին արգելված է ընդունել բաժնեգիրներից դու-  
մարներ, առանց ընդունված գումարներն անդորրագրում և ար-  
մատում գրանցելու: Հաշվարկային անդորրագրերը պիտի ճըշ-  
տորեն արտացոլեն փոխառութեան բաժնեգրութեան հաշվար-  
կումների դրութեանը և հանդիսանան այնպիսի մի փաստա-  
թուղթ, վորով ստուգվում է լիազորի աշխատանքները:

Ինչպես փոխառութեան բաժնեգրութեանը, նույնպես և  
մուծումների հավաքումը պիտի սկսել ակտիվից: Խորհուրդների  
դեպուտատները, կոլտնտեսութեանների վարչութեանների ան-  
դամները, բրիգադիրները և դյուղի առաջավոր մարդիկ, պիտի  
որինակ ծառայեն բոլոր մնացած կոլտնտեսականների և դյու-  
ղացի-մենատնտեսների համար:

Յուրաքանչյուր լիազորի խնդիրն է կազմակերպել բաժ-

նեցրութեան ամբողջ մտնումների արագ հավաքումը, ցույց տալով իր անձնական որինակով, քե ինչպես պիտի կատարել պետութեան հանդեպ ինձնական կերպով իր վրա վերցրած պարտականութիւնները:

Պետութեանը շահագրգռված է զբաղուած, վորպեսզի փոխառութեան միջոցները վորքան կարելի յե արագ կերպով մուծվին բյուջեն և հետեւապես արագորեն աշխարհիք ոգտագործվին սոցիալիստական շինարարութեան Փինանսավորման վրա: Այդ պատճառով ել հավաքված բոլոր գումարները լիազորները պարտավոր են յարաբանելու որ հանձնել ֆինանսական գործակալին կամ գլուղական խնայողութեանը, նայած քե տվյալ լիազորը զբաղեցից վորին է կցված վախառութեան հաշվարկումների հաւմար: Յեթե լիազորը փոխառութեան գումարների հավաքումը կատարում է այնպիսի կոլանստութեաններում կամ գլուղներում, վորոնք տեղավորված են Փինանսական գործակալներ և խնայողութեանը կողմէն շունեցող բնակավայրերում, ապա նա հավաքած գումարները հանձնում է յերեք ուրը մեկ անգամից վոչ պակաս:

Լիազորի բոլոր հաշվարկումները Փինգործակալի (կամ խնայողութեանը) հետ տարվում են անձնական հաշի ողնութեամբ, վորը մշտապես պահվում է Փինգործակալի մոտ, իսկ այդ հաշի պատճեն հանձնվում է սու ձեռն լիազորին: Այդ յերկու փաստաթղթի վրա ել Փինգործակալը գրանցում է այն բոլոր գումարները, վորոնք նա ընդունում է լիազորից, ինչպես է նրան տրվող հաշվարկային անդորրագրերը և փոխառութեան պարտատոմսերը: Անձնական հաշի վրա կատարվող յուրաքանչյուր գրանցում հաստատվում է լիազորի ստորագրութեամբ, իսկ անձնական հաշի պատճենում— Փինգործակալի (կամ խնայողութեանը կողմէն) ստորագրութեամբ:

Իրամները հանձնելու ժամանակ լիազորը պիտի ունենա իր մոտ հաշվարկային անդորրագրերի արժանները, վորպեսզի Փինգործակալը կարողանա ստուգել հանձնվող գումարների լրիվ լինելը:

Բաժնեգրութեան բոլոր հաշվարկումները պիտի տանել պարզ ու մաքուր, վորովհետեւ մեծ մասամբ գրանից է կախված բաժնեգրութեան գումարների գանձումը, այդ գումարների ամբողջականութեանը և այդպիսիք ժամանակին պետական գանձարկերներին հանձնելը:

Բաց թողնելով փոխառութեաններ, խորհրդային կառավարութեանը ցուցաբերում է մեծ հոգատարութեան այն մասին, վորպեսզի փոխառութեան բոլոր բաժնեգրներն ամբողջութեամբ և ժամանակին ստանան պարտատոմսերով իրենց (հասանելիք յեկամուտները (շահումները, կորոններով— տոկոսները):

Այդ կապակցութեամբ մեծ նշանակութեան ունի փոխառութեան պարտատոմսերը ժամանակին բաժնեգրներին հանձնելը: Լիազորը պարտավոր է պարտատոմսերը հանձնել յուրաքանչյուր բաժնեգրին— նրա կողմից իր բաժնեգրութեան գումարը վճարելուց անմիջապես հետո, ընդ վորում այնպիսի արժողութեան ու մասերով, վորոնք նշված են յեղել բաժնեգրի կողմից բաժնեգրութեան թերթիկում: Իրա համար լիազորն ստանում է Փինգործակալից (կամ խնայողութեանը կողմէն) անհրաժեշտ քանակութեամբ պարտատոմսեր:

Տալով պարտատոմսերը բաժնեգրներին, լիազորը նշում է հաշվարկային անդորրագրի և նրա արժանի վրա պարտատոմսերի գումարը և այդպիսիք հանձնելու ուրը: Բաժնեգրներն ստորագրում է անդորրագրի արժատում— պարտատոմսերն ստանալու մասին, իսկ լիազորն ել իր ստորագրութեամբ հաստատում է հաշվարկային անդորրագրում տրվող պարտատոմսերի գումարն ու այդպիսիք տալու ուրը: Իրա հետ միասին հաշվարկային անդորրագրերը բաժնեգրից վերցվում է և անդորրագրի արժատի հետ միասին լիազորի կողմից հանձնվում է Փինանսական գործակալին:

Լիազորի աշխատանքները չի սահմանափակվում միայն բաժնեգրութեան անցկացնելով և մուծումներ գանձելով:

Նրա ուղղակի պատասխանութեանն է— հոգ տանել պարտատոմս պահողների շահերի համար, տեղյակ դարձնել նրանց խաղարկութեանների ժամկետների մասին, ոգնել նրանց ստանալու փոխառութեանից նրանց հասանելիք յեկամուտները: Յուրաքանչյուր խաղարկութեանից հետո, լիազորը պարտավոր է ողնել կոլանստականներին ստուգելու շահումների աղյուսակով իրենց պարտատոմսերը, իսկ անդրադեմների նկատմամբ— ինքը ստուգել նրանց պարտատոմսերը: Լիազորների ուշադիր վերաբերմունքը զեպի պարտատոմս պահողները, նրանց կուլտուրական սպասարկումը, կարող է ոժանդակել աղղարնակչութեան յայն մաստաների հետաքրքրութեան բարձրացմանը զեպի փոխառութեանները, հետեւապես և կոժանդակի պետական փոխառութեաններին հետագա զարգացմանը:

Իր պարահանուկները լիազորը կատարում և հասարակական հանձնարարության կարգով: Դրա հետ միասին, այդ աշխատանքների համար շրջանային խնայողական դրամարկղը վճարում և յուրաքանչյուր լիազորին հատուկ վարձատրություն, նրա կողմից հավաքված գումարի յերկու տոկոսի չափով: Այդ վարձատրությունը վճարվում և յերեք ժամկետներում՝ 1940 թ. սեպտեմբերի 1-ից, 1941 թվի հունվարի 1-ից վոչ ուչ և փոխառության հաշվարկումները վերջացնելուց հետո: Այն վիազորներին, վորոնք ժամկետից շուտ են հավաքում փոխառության բանկրություն գումարները, վարձատրությունը վճարվում և լրիվ չափով, մոլծմունքների հավաքումը նրանց կողմից վերջացնելուց անմիջապես հետո: Դրա հետ միասին, փոխառության հաշող աշխատանքների համար լավագույն լիազորները պարգևատրվում են:

Գյուղական խորհուրդների լիազորներին հավատ և ընծայված պետական մեծ դործ: Այդ հավասար յուրաքանչյուր լիազոր պիտի արդարացնի բոլշևիկյան վերաբերմունքով դեպի հանձնարարված աշխատանքը: Հասարակական պարտականությունների որինակելի կատարումը լիազորի կողմից, հանդիսանում և կոլտոտեսականների և գյուղացի-մենատնտեսների մեջ փոխառության հաշող իրացման գրավականը:



Գլավլիտի լիազոր՝ Ջ—1162. Հրատ. 5270.  
Պատվեր 438. Տիրած 5000.

Հանձնված և արտադրության 4 հունիսի 1940 թ.  
Ստորագրված և տպագրության համար 19 հունիսի 1940 թ.

Հայկեստանի տպարան, Յերևան, Լենինի 65

**ЧТО НАДО ЗНАТЬ**

уполномоченному сельского совета о  
Займе Третьей Пятилетки (выпуск треть-  
его года)